իր սուրը եւ մարմնական ուժը, որ նրա մէջ շատ զարգացած են, այլ նա բանեցնում է իր հմտութիւնը եւ խելքը, որոնք նրա մէջ խիստ թոյլ են:

Քուրդը խաբեբայ չէ. նա հաւատարիմ է իր խոստմունքը կատարելու մէջ: Նա մնում է միշտ ճիշտ իր պարտքը վճարելու մէջ: Վճարել այն, ինչ որ պարտքով էր առած, եւ կողոպտել ուրիշի սեփականութիւնը — երկուսն էլ միօրինակ սուրբ են նրա համար: Առաջինի մէջ նա պահպանում է իր պատիւը եւ խօսքը, իսկ, երկրորդի մէջ՝ իրաւունքը եւ արդարութիւնը: Որովհետեւ քրդի համար ոչինչ ընդդէմ չէ իրաւունքի եւ արդարութեան, երբ նա սեփականացուցած էր սրի եւ յաղթութեան ուժով: Սուրը եւ յաղթութիւնը արդարութեան կշիռն է նրա եւ իր հակառակորդի մէջ:

Այսպէս է վարւում ամէն մի աւազակ. այսպէս է վարւում ամէն մի հասարակութիւն, որ նոյն բնաւորութիւնն ունի. այսպէս է վարւում մի ամբողջ պետութիւն, որ աւազակի դեր է խաղում...

Այսքանը բաւական համարելով քրդի բնաւորութեան եւ ընտանեկան կենցաղավարութեան մասին, դառնանք այժմ դէպի նրա քաղաքական կեանքի կազմակերպութիւնը:

Քրդերի ցեղերը կառավարւում էին իրանց էլ-աղասիների (ցեղապետների) եւ շէյխերի (դէնպետների) գլխաւորութեամբ:

Ցեղապետը, որ կոչւում է «միրէ» (տէր), չէ նշանակւում ընտրողական սկիզբներով. նա, որպէս ցեղի նահապետը, սերունդից սերունդ, տիրում է ժառանգաբար: Ամբողջ ցեղը հպատակւում է նրա իշխանութեանը խոնարհ, որդիական հնազանդութեամբ. նրա սուրը, նրա ձեռքը, նրա կեանքը միշտ պատրաստ են ծառայելու պետի կամքին եւ հաճոյքին, որքան եւ չար կամ բարբարոսական լինէին նրանք: Ցեղապետն է վճռում իր ժողովրդի վէճերը, նա է բաժանում աւարը յափշտակողների մէջ, նա է առաջնորդում իր ցեղին կռոի ժամանակ, նա է ուղարկում խումբերը աւարառութեան համար: Ցեղապետը ամէն առաւօտ իր չադրի մէջ նստած, ընդունում է ցեղի նշանաւոր տղամարդերին, որոնք իրանց զինորական ամբողջ կազմուածքով, ներկայանում են նրան, լսելու պետի պատուերները: Այնտեղ ծխում են հիւրասիրութեան չիբուխը, խմում են մի-մի ֆինջան դառն զահուէ: Մի այսպիսի «սալամը» կատարւում է ամէն առաւօտ իր բոլոր ճշտութեամբ:

Իսկ շէյխերը նշանակւում են գլխաւոր դենպետից. նրանք ունեն իրանց մուֆթիները եւ ղազիները: Շէյխերը կատարում են ցեղի կրօնական պահանջները, որպիսի են՝ ամուսնութիւն, թլպատութիւն եւ հրապարակական նամազ: Իսկ կռիւների մէջ նրանք մասնակցում են որպէս զինորոր, բայց